

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱՆ, Արարատյան հայրապետական թեմ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎՈՒՆՔ, ԼԵԶՈՒ. ՄԻՋՆԱԴԱՐԻՑ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝

Մաս Բ

Ժէ.—ԺԸ. դարերում Օսմանյան կայսրության մեջ ապրող հայության (հետապսու՝ արեւմտահայություն) շրջանում միջնադարյան կրթական ավանդույթից դեպի ուսման նոր՝ լուսավորական աստիճանի անցումը բացատրվում էր, մի կողմից, կայսրություն Եւրոպայից լուսավորության ներթափանցմամբ, մյուս կողմից՝ կաթոլիկ եւ բողոքական շարժումներին Հայկական Եկեղեցու՝ մասնավորապէս Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ջատագովական հակադրությամբ¹: Լուսավորական ազդեցությամբ պայմանավորված՝ կրթական ավանդույթների փոխակերպումների վաղ շրջանում տեղի են ունենում վանական դպրոցներից նոր տեսակի քաղաքային ուսումնարանների, ձեռագրերից՝ գրատպության, արականից՝ երկսեռ կրթության, գրաբարից՝ աշխարհաբարի (մասնակի) անցումները: Ժամանակի ընթացքում լուսավորության ազդեցությունը, բացի կրթական ոլորտից, տարածվում է այլ ասպարեզներում եւս:

Մինչեւ ԺԹ. դարն արեւմտահայության մեջ լուսավորության վերոհիշյալ կրթական ծավալումը, բառի ընդարձակ իմաստով, պահպանողական բնույթ է կրում, քանի որ այս շրջանում միայն հոգեւորականներն են, որ լուսավորական գործիքների կիրառմամբ ջանում են գլխավորապէս տարածել եւ պաշտպանել սեփական ավանդույթունը: Հետագայում՝ սկսած ԺԹ. դարից, առաջադիմական երկրորդ ալիքով լուսավորության յուրացումն արեւմտահայության մեջ առավել ընդգրկուն ընթացք է ստանում՝ այս անգամ ներառելով նաեւ աշխարհականներին

¹ Ստացվել է՝ 4.07.2023, գրախոսվել է՝ 6.07.2023:

էլ. հասցե՝ samveldpirpoghosyan@gmail.com:

² Տէս Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Միջնադարյան կրթության վերագարթոնքը եւ լուսավորության տարածումը Օսմանյան կայսրության հայության մեջ (Մաս Ա.), «Էջմիածին», Դ., 2023, էջ 47–62:

եւ իրագործվելով նրանց կողմից: Այս շարժումն ընդունված է պայմանականորեն անվանել բուն լուսավորություն³: Բուն լուսավորության տարածամբ նկատելի են դառնում լիովին նոր իրողություններ, ինչպես օրինակ՝ Օսմանյան տերության սահմաններում ապրող հայության իրավական կարգավիճակի սահմանումն ու գործադրումը, տնտեսության, արդյունաբերության, բժշկության եւ մասնագիտական այլ ոլորտների ձեւավորումն ու զարգացումը, աշխարհիկ բարձրագույն կրթական ու հարակից հաստատությունների՝ տպարանների, մամուլի հիմնումը եւ այլն: Այս նորարարությունները նախաձեռնում են հատկապես եւրոպական տարբեր քաղաքներում (սկզբում առավելապես Իտալիայի, ապա նաեւ Ֆրանսիայի) եւ տեղի բարձրագույն ուսումնարաններում կրթություն ստացած աշխարհականները: Այդուհանդերձ, չնայած այս շրջանում լուսավորության բովանդակության եւ ձեւի շուրջ եկեղեցական եւ աշխարհիկ ուսյալ անձանց որոշ հակասություններին, հստակ է, որ արեւմտահայության մեջ բուն լուսավորությունը զարգացել է երկու՝ հոգեւորականների եւ աշխարհականների ճամբարներում միաժամանակ եւ հաճախ միասնաբար:

Արեւմտահայության մեջ լուսավորության տարածումն ընթանում է էական շրջադարձերով, որոնցից այստեղ նկատի են առնված կրթությամբ, իրավունքի եւ լեզվի ոլորտներում տեղի ունեցածները: Դրանք պայմանավորում եւ կերտում են հայ մտավորականության հետագա զաղափարական հիմնական ուղղությունները:

Ա. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԻ ՄԵՋ

ա. Աշխարհականների կրթությունը. 1789 թ. Օսմանյան տերության մեջ կայսեր՝ հայերին կրթության ազատ տարածման իրավունք շնորհելը հնարավոր է դարձնում ոչ միայն հոգեւոր նոր, այլեւ մի շարք աշխարհիկ կրթարանների հիմնադրումը⁴: Այս իրավունքի կիրառմամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը հայկական տարբեր քաղաքների եւ գյուղե-

³ Նկատի է առնվում արեւմտահայության մեջ տեղի ունեցող «լուսավորության» սերտ եւ առավել արմատական հետեւողությունը եւրոպական լուսավորությանը:

⁴ Տե՛ս K. A. SARAFIAN, History of Education in Armenia, La Verne, California, 1930, էջ 200, Թ. ԱՋԱՏԵԱՆ, «Հարիւրամեայ հոբելեան Պեղճեան մայր վարժարանի», 1830–1930, Կ. Պոլիս, 1930, էջ 6, նաեւ Գ. ՆԱՋԻԿՅԱՆ, Արեւմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչեւ 19-րդ դարի 50–60-ական թվականներ), Երեւան 1969, էջ 25:

րի հոգեւոր առաջնորդներին կարգադրում է դպրոցներ հիմնել⁵: Այդպիսով հայաշատ բազմաթիվ համայնքներում բացվում են զգալի թվով աշխարհիկ կրթօջախներ, որոնք հիմնականում հայտնի էին «թաղային» կամ «հանրային» դպրոցներ անունով: Դրանք արեւմտահայութեան մեջ լուսավորության տարածման նախապատրաստության գործում էական դերակատարում են ունենում: Ամեն դեպքում աշխարհիկ նմանօրինակ կրթական հաստատությունները սկզբնապես ապահովում են գիտելիքի միայն ընդհանուր մակարդակ՝ հաճախ քիչ թե շատ հետեւելով նախկինում վանքերից բնակավայրեր տեղափոխված հոգեւոր կրթարանների ծրագրերին եւ մեթոդներին: Այդպիսին է, օրինակ, ամիրա Մկրտիչ Միրիճանյանի (ուսանել է Իտալիայում) ժԹ. դարի վերջում հիմնած դպրոցը, որը մի քանի աղբյուրներում համարվում է արեւմտահայութեան աշխարհիկ առաջին ուսումնական հաստատությունը⁶: Այն բացվում է Գումգափու թաղամասում, որտեղ միեւնույն ժամանակ սկսում է գործել տպարանը՝ դպրոցի սաների համար դասագրքեր հրատարակելու նպատակով: Նույն գործչի նախաձեռնությամբ հիմնադրվում է նաեւ երկու այլ թաղային դպրոց՝ Ս. Լուսավորիչ եւ Ս. Հրեշտակապետ անվանումներով. այս կրթօջախներում դասավանդվել են պարզ առարկաներ՝ գիր, թվաբանություն, կրոն, հայերեն⁷:

Չնայած թաղային դպրոցների տարածմանը՝ ժամանակի ընթացքում արեւմտահայերի շրջանում առավել բարձր եւ մասնագիտական կրթություն ապահովելու անհրաժեշտություն է առաջանում՝ հաշվի առնելով գիտության, առեւտրի ու արդյունաբերության ասպարեզում Օսմանյան կայսրության մեջ ի հայտ եկող առաջադիմական նորանոր նվաճումները, պահանջները եւ հետաքրքրությունները⁸:

⁵ Իսկ 1824 թ. հատուկ կոնդակով Կարապետ Պատրիարքը բոլոր առաջնորդներին հրամայում է իրենց վիճակներում «հաստատել դպրոցս ի կրթութիւն մանկանց եկեղեցւոյ».

Թ. ԱՋԱՏԵԱՆ, նշ. աշխ., էջ 14:

⁶ Տէս Գ. ՆԱԶԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 25:

⁷ Տէս Թ. ԱՋԱՏԵԱՆ, Պէզճեան Մայր Վարժարան, Գում Գաբու 1830–1930, էջ 11–13: Քերականություն, ճարտասանություն կամ տրամաբանություն առարկաները, որոնք ուսուցանվում էին վանքերում, քիչ հասանելի են այս շրջանում: Նույն տեղում կարդում ենք, որ 1820-ականներին քերականություն, տրամաբանություն կամ ճարտասանություն ուսանած անձանց կոչում են նաեւ «փիլիսոփա», «իմաստուն» կամ «գիտուն»:

⁸ Այն ավելի բարձր մակարդակի կրթական հաստատությունների գործունեության մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով տողատակերում կներկայացնենք այդ հաստատությունների՝ մեզ հայտնի դասացուցակները, դրանցում գործող ճանաչված անձանց անունները եւ հրատարակությունները:

Այդ նպատակով պարբերաբար բացվող տեղական դպրոցներին զուգահեռ եւրոպական վարժարանների հետեւողությամբ 1828 թ. Օսմանյան կայսրութիւնում արեւմտահայութեան համար բացվում է աշխարհիկ բարձրագույն առաջին վարժարանը՝ Պեգնյան ուսումնարանը⁹, որտեղ դասավանդվում են կրօնական առարկաներ, հայոց լեզու, ճարտասանութիւն, տրամաբանութիւն եւ իտալերեն: Ուսումնարանի տնօրենը ժամանակի ուսյալ մտավորականներից մեկն էր՝ Գ. Փեշտիմալճյանը († 1837), որը նաեւ դասագրքեր¹⁰ է հրատարակում նույն հաստատութեան սովորողների համար: Գ. Փեշտիմալճյանը ստորեւ հիշատակվող մտավորականներից շատերի առաջին ուսուցիչն է¹¹: Կարեւոր մեկ այլ հատնի ուսումնարան է Խասգյուղում 1836 թ. հիմնված Ներսիսյան վարժարանը¹², որի նշանավոր լուսավորական սաներից են Ռ. Պերպերյանը, Մ. Զերազը, Ե. Տեմիրճիպաշյանը եւ այլք¹³: Նույն ժամանակաշրջանի ամենամեծ կրթարանը՝ Սկյուտարի ազգային ճեմարանն է, որտեղ փորձել են մի քանի նոր առարկա ներդնել¹⁴: Այս հաստատութեան ուսումնական վարիչը այդ շրջանի պահպանողական մտավորական Հովհաննես Տերոյենցն էր, որը փորձում էր վերականգնել կրթութեան կրօնական ուղղվածութեանը՝ այն կրթական ծրագրերում առաջնային համարելով: Տեղում դասավանդել է նաեւ «մյուսիո Պասկալ» անունով հայտնի Հարութիւն Թյուլլանը, որն ուսուցանել է էլեկտրական հմտութիւն եւ հեռագրութիւն¹⁵: Այս ուսումնական հաստատութիւնները լուսավորական նոր միջնորդութեան ձեւավորում, սակայն արեւմտահայութիւնը չի բավարարվում միայն բարձրագույն դպրոցներով:

Հատկապես մասնագիտութիւն ձեռք բերելու կամ արդեն եղածը խորացնելու նպատակով արեւմտահայերը ժամանակի ընթացքում

⁹ Տէս Թ. ԱԶԱՏԵԱՆ, նշ. աշխ.:

¹⁰ Օրինակ՝ «Քրիստոնէական Վարդապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» (աշխարհաբար եւ որոշ հատվածներ տաճկերեն), «Տրամաբանութիւն կամ Արուսեստ Բանական», «Կրթութիւն քաղաքավարութեան», «Քերականութիւն Գրաբարի», «Լուսաշավիղ (Նիկեական Հանգանակի պարզաբանութիւն)» գրքերը, տէս Թ. ԱԶԱՏԵԱՆ, նշ. աշխ., էջ 25:

¹¹ Անդ, էջ 27–30:

¹² Այստեղ դասավանդվել է բնագիտութիւն, քիմիա, շափաբերութիւն, ֆրանսերեն, իտալերեն եւ այլն, տէս Գ. ՆԱԶԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 76–77:

¹³ Այստեղ գործել է նաեւ դպրոցական թատրոն, տէս անդ:

¹⁴ Օրինակ՝ (ա) աշխարհագրութիւն՝ ուսումնական, քաղաքական, բնական, (բ) գյուղատնտեսութիւն, (գ) արհեստների ուսուցում եւ այլն, տէս անդ, էջ 80:

¹⁵ Անդ, էջ 86–87:

սկսում են ավելի խոր կրթական հետաքրքրություններ դրսևորել: Արդյունքում առավելապես հայ ամիրանների աջակցությամբ մի խումբ երիտասարդներ (հաճախ նաեւ ամիրանների զավակները) իրենց ուսումը կատարելագործում են եւրոպական՝ հատկապես ֆրանսիական կրթական հաստատություններում: Սկզբնական շրջանում, ինչպես վերը նշեցինք, Իտալիան էր իր գրականությամբ, արվեստով եւ արհեստներով արեւմտահայության մեջ դիտարկվում իբրեւ լուսավորության ներմուծման բուն օջախ, իսկ արդեն ԺԹ. դարի երկրորդ կեսից սկսվում է հետաքրքրությունը ֆրանսիական կրթության նկատմամբ: «Բարիզ կը դառնար կ'ըլլար կեդրոն մը լուսավորութեան Թրքահայոց, իր մէջ այդ նշանաւոր գաղափարներու խմորման պահուն համախմբուած ունենալով հազուագիւտ կերպով համալսարանական զարգացման հասած անձեր, ընտիր ուսանողներ, պատուական վարդապետներու խումբ մը, եւ երկրորդական կրթութիւն տուող ընտիր վարժարան մը: Հոն էր Հայոց մտաւորական ուժերու մեծամասնութիւնը, այսինքն ազգին ընտրեւագոյն մասը, այն որ առաջնորդ, առաջապահ եւ ղեկավար ըլլալու կոչուած էր»¹⁶, – գրում է Ա. Ալպոյաճյանը:

Արեւմտահայության համար Ֆրանսիայում գտնվող հայկական ամենահայտնի կրթարանը Փարիզի Մուրադյան վարժարանն է, որն սկզբում (1832 թ.) հիմնված լինելով Իտալիայի Պադուա քաղաքում (1836 թվականից գործել է «Մուրադ-Ռաֆայելյան» վարժարան անունով)՝ հետագայում՝ 1846 թ., տեղափոխվել է Փարիզ եւ կարեւոր կրթօջախ դարձել Օսմանյան պետության, Եգիպտոսի, Պարսկաստանի հայ երիտասարդների համար¹⁷: Չնայած այն բանին, որ «Մուրադ-Ռաֆայելյանը» պատկանում էր Մխիթարյան միաբանությանը, այն գրեթե ողջ հայ ուսանողության, մի տեսակ, մայր ուսումնարանն էր: Վարժարանի շրջանավարտներից շատերը գործել եւ հաջողությունների են հասել ամենատարբեր ոլորտներում՝ կրթության, առևտրի, մշակույթի, արդյունաբերության եւ այլն¹⁸:

¹⁶ Տե՛ս Ա. Ա. ԱՊՈՅԱՆԻ, «Ազգային Սահմանադրությունը. իր ծագումը եւ կիրառությունը, Ընդարձակ Օրացոյց Հիւանդանոցի, Կոստանդնուպօլիս, 1910, էջ 242:

¹⁷ Հայտնի է, որ այստեղ դասավանդվել է հայերեն՝ գրաբար եւ աշխարհաբար, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, եկեղեցական պատմություն, աշխարհագրություն, իրավագիտություն, բնագիտություն, մաթեմատիկա եւ այլն, տե՛ս Գ. ՆԱԶԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 105:

¹⁸ Մեկ այլ հայտնի փարիզյան ուսումնական կենտրոն է 1855 թ. Մուրադյան վարժարանի նախկին ուսուցիչների (սզել են իրենց կապը Մխիթարյանների հետ) հիմնված

Փարիզի հայկական կրթական հաստատություններից զատ՝ Օսմանյան կայսրության հայազգի մի շարք ուսանողներ կրթություն էին ստանում նաեւ եւրոպական ուրիշ հաստատություններում եւ վերադառնալով հայկական համայնքներ՝ իրենց գործունեությամբ եւ հրատարակած աշխատություններով առաջադեմ լուսավորական գաղափարներ էին տարածում արեւմտահայության շրջանում¹⁹:

Այսպիսով հիմք է դրվում աննախադեպ արագ զարգացող աշխարհական կրթությանը: Սա նոր գիտակարգերի յուրացման, կրթական եւ մշակութային փոխակերպման, արհեստների զարգացման եւ ինքնության նորոգման ժամանակաշրջան է, որտեղ կրթությունը դիտվում է որպէս առաջադիմության առանցք եւ զարգացման միջոց: (Միաժամանակ ակնհայտ է, որ մի շարք նոր գիտություններ այլեւս կապ չունեն հայտնի միջնադարյան գիտակարգերի հետ: Թեեւ հաճախ առկա է միջնադարյան կրթության որոշ տարրերի պահպանման միտում, սակայն միաժամանակ շատ դեպքերում նկատելի է նաեւ հակառակ երեւույթը՝ միջնադարյան կրթական ավանդներից շեղումը): Նոր ուսումնական ծրագրերով գործող աշխարհիկ ուսումնական հաստատություններին զուգահեռ հոգեւոր կրթարաններում ուսուցման ձեւը եւ բովանդակությունը լու-

«Արեւելեան բազմալեզու» կամ «Հայկազեան» վարժարանը: Ունենալով դասավանդման գրեթե նույն առարկայացանկը՝ այն գործել է մոտ մեկ տարի միայն, տէս Գ. ՆԱՋԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 116–118:

¹⁹ Այդպէս օրինակ՝ Սերովբե Վիչենյանը (†1897), ավարտելով իտալական Պիզայի համալսարանի բժշկական բաժինը, հրատարակել է երեխաների դաստիարակությանը եւ քաղաքացիական պարտականություններին վերաբերող գրվածքներ: Հակոբ Կրճիկյանը (†1865) Սորբոնում հետեւել է տարբեր դասընթացների, լույս է ընծայել մետաքսագործության մասին ձեռնարկներ, որոնք թարգմանվել են հունարեն եւ թուրքերեն: Նիկողայոս Զորայանը (†1859) ինքնակրթության նպատակով այցելել է Անգլիա, Իտալիա, Ֆրանսիա, հեղինակել է բազմաթիվ կրթադաստիարակչական եւ տնտեսագիտական ուսումնասիրություններ: Գրիգոր Աղաթոնը (†1867) սովորել է Փարիզի Գրինոյի երկրագործական բարձրագույն դպրոցում եւ ընթերցողի սեղանին դրել մասնագիտական երկեր: Վերջապէս Նահապետ Ռուսինյանը (†1876), ուսանելով Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկության բաժնում, հրատարակել է քերականական, փիլիսոփայական գրքույկներ եւ 1849 թ. հիմնել «Արարատեան ընկերութիւնը», որի նպատակը լուսավորական-առաջադիմական գործունեության ծավալումն էր՝ առանց կրոնական կամ քաղաքական ուղղվածության: Տեղում ոչ մեծ հաջողությունների հասնելով՝ այս միության անդամներից շատերը 1850-ականներին վերադառնում են Կ. Պոլիս ու գործուն մասնակցություն ունենում ազգային բարենորոգչական լուսավորական շարժմանը, տէս Ա. ԱԼՊՅԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 253: Մեկ այլ կրթական միություն է «Ընթերցասիրաց ընկերութիւնը», որ հիմնվում է Կ. Պոլսում 1852 թվականին՝ նպատակ ունենալով ազգի մեջ հետաքրքրություն արթնացնել դեպի ընթերցասիրությունը, բացի այդ, գրքեր, թանգարանային իրեր հավաքել, գրադարան ստեղծել եւ այլն:

սավորության ազդեցությամբ նույնպես փոփոխության է ենթարկվում՝ ի հայտ բերելով բոլորովին նոր իրավիճակ, որը մասնակիորեն շարունակվում է մինչև այսօր, սակայն էապես տարբեր է եկեղեցական կրթական բազմադարյան ավանդությունից:

բ. Աեռնդյան վարժարան եւ «Յոյս» ամսագիր. հոգեւորականների կրթությունը. ԺԹ. դարի առաջին կեսից հոգեւորական դասին կրթելու նպատակով Հովհաննես Կոլոտ եւ Հակոբ Նալյան պատրիարքների Սկյուտար եւ Գումգափու թաղամասերում հիմնած «Դպրոցներին» փոխարինելու է գալիս Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող Նիկոմիդիա գավառի (այսօր՝ Իզմիր) հայտնի Արմաշի վանքի «Ժառանգավորաց», իսկ հետագայում «Աեռնդյանց» անունը կրող վարժարանը: Գալով դրա նախապատմությանը՝ հարկ է նշել, որ այն առնչվում է Կոլոտ եւ Նալյան պատրիարքների կոստանդնուպոլսյան կրթական գործունեության հետ, քանի որ Արմաշի վանքի առաջին կրթարանի հիմնադիրը կոլոտ-նալյանական կրթական ավանդության ժառանգորդ, Պրուսա քաղաքի ժամանակի քաջածանոթ առաջնորդ Պողոս արք. Ղարաբոչյանն²⁰ է: Ստանձնելով Պրուսայի եւ Նիկոմիդիայի առաջնորդի պաշտոնը՝ նա արդեն 1810 թ. Պրուսայում դպրոց է հիմնում եւ աշակերտներից լավագույններին հետագայում տեղափոխում է Արմաշ²¹: Ղարաբոչյանի ուսյալ աշակերտներից Հովհաննես Տերոյենցը (†1888) եւ Ստեփանոս եպս. Աղավնին (†1888) (երկուսն էլ ծնունդով պրուսացի), հետագայում Արմաշի կրթարանում պաշտոններ ստանձնելով, էականորեն բարելավում են հոգեւորականների կրթությունը՝ ապահովելով «պահպանողական լուսավորությունից» դեպի բուն լուսավորություն անցումը²²:

Չնայած սկզբնական շրջանում իր ոչ տեսանելի հաջողություններին՝ Արմաշի «Ժառանգավորաց» վարժարանում կես դար ծավալվող կրթական գործունեությունը 1860-ականներից տալիս է շոշափելի պտուղներ՝ հոգեւորականների ձեռնադրություններ, նոր տպարանի հիմնում, ժամանակի համար նոր բովանդակությամբ գրական հանդեսի («Յոյս») հրատարակություն, նոր գրքերի տպագրություն եւ այլն: Ղարաբոչյանից հե-

²⁰ Տէս Պ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Ա. ՄՈՒՇԵԳԵԱՆ, Արմաշի Դպրեվանքը, Գանձասար, 1998, էջ 40, 3. ՄԸՐՄԸՐԵԱՆ, Ստուերք հին դեմքերու (1635–1900), Կոստանդնուպոլիս, 1907, էջ 31–37:

²¹ Տէս Պ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Ա. ՄՈՒՇԵԳԵԱՆ, Արմաշի Դպրեվանքը, էջ 40, 42:

²² Տէս Թ. Ե. Գ., Արմաշու Դպրեվանքին 25 ամեայ յոբեկեանին առթիւ, 1889–1914, Կ. Պոլիս, 1914, էջ 14:

տո աշատեղ կարեւոր գործունեություն է սկսում վերելում հիշված Ստեփանոս եպս. Աղավինին, որի վանահայրության օրերին այս վարժարանի ուսումնապետ է կարգվում (1825–1830) նույն Հովհաննես Տերոյենցը²³: Վերջինիս աշակերտում են հետագայում նշանավոր լուսավորականներ Ստեփանոս արք., Մաղաքյանը, Հովհաննես Մավյանը, Կարապետ Պրուսացին եւ այլք: Ամենայն հավանականությամբ նրանց շնորհիվ է հետմղվում միջնադարյան կրթական ավանդությունը, եւ ասպարեզ բացվում լուսավորական կրթության նոր բովանդակության համար:

«Յոյս» հանդեսի խմբագրի պաշտոնը շուտով զբաղեցնում է լուսավորական գաղափարներով կրթված վարդապետների մի սերունդ: Նրանցից հատկապես խորեն վրդ. Աշրգյանը, Ստեփանոս վրդ. Փափազյանը եւ Գէորգ վրդ. Ալիքսանյանը, աշխատելով խմբագրի եւ ուսումնապետի պաշտոններում, դառնում են բուն լուսավորության հաստատման առաջամարտիկներ ոչ միայն հոգեւորականության, այլեւ ազգային շրջանակներում²⁴:

Կրոնական, խրատական եւ ճանաչողական հոգվածների կողքին «Յոյս» հանդեսում տեղ են գտնում նույն վարդապետների աշխարհաքաղաքական եւ փիլիսոփայական հոգվածները, որոնք նախապատրաստում են այն էական փոփոխությունները, որ տեղի էին ունենում հայ վանականության մեջ լուսավորության միջոցով²⁵: Այսպիսով վանական վարդապետները, հետեւելով ժամանակի եւրոպական լուսավորական բովանդակային զարգացումներին, աննախադեպ կերպով ներգրավվում են քաղաքագիտության եւ փիլիսոփայության բնագավառներում: Հայ վարդապետները, քաղաքական կյանքում իրենց տեսնելով որպես ազգային հարցերի նշանակալից դերակատարներ (քանի որ Օսմանյան կայսրությունում հայոց պատրիարքությունն էր, որ սկզբնապես իրավական կարգավիճակ ուներ եւ հետագայում եւս

²³ Վերջինիս մասին ավելի մանրամասն տե՛ս Յ. ՄԱՐԿՐԵԱՆ, Տասնեւիններորդ դար եւ Յովհ. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, 1908:

²⁴ Թ. Ե. Փ., նշ. աշխ., էջ 19:

²⁵ Այդ առումով ուշադրության արժանի են «Յոյս» հանդեսում տպված աշխարհաքաղաքական՝ «Տեսություն ժամանակի խնդրոյ», (1875, հմր. 9, էջ 513–530), «Ռուսիա եւ Անգղիա Կեդրոնական Ասիոյ մէջ» (1875, հմր. 10, էջ 589–610), «Մեր երկրին արդի վիճակը» (1876, հմր. 11, էջ 659–676) եւ փիլիսոփայական՝ «Կրօնական փիլիսոփայութիւն (1869 թ. հմր. 40, էջ 361–365), «Տեքարդայ Ճառ Ոճոյ եւ Բնագանցական» Յառաջաբան Թարգմանչին, (1877 թ. հմր. 6, էջ 378–380) հոգվածները:

մնում էր հայուխյան՝ իրավական կարգավորման միակ մարմինը), պետք է կանխատեսեին եւ գործեին աշխարհաքաղաքական իրավիճակից եւ դրանով պայմանավորված գաղափարային զարգացումներից ելնելով: Հստակ է նաեւ, որ աշխարհականների գործուն ներգրավումը պատրիարքական լիազորությունների մեջ պետք է դրդեր եկեղեցականությանը զինվելու լուսավորական (քաղաքագիտական, իրավագիտական եւ այլ) նոր գործիքներով:

Վերադառնալով Արմաշի վարժարաններում ծավալվող կրթական գործընթացին՝ հավելենք, որ ուսումնական ծրագրի մասին ուշագրավ տեղեկության ենք հանդիպում Ղեւոնդյան վարժարանի սան Ա. Շարապխանյանի 1876 թ. թարգմանած ժաբ Բոսյեի «Յաղագս ծանօթութեան Աստուծոյ եւ անձին» աշխատության նախաբանում, որից կարելի է ենթադրել, որ Արմաշի Ղեւոնդյան վարժարանում ծանոթ են եղել եւ հավանականորեն հետեւել են Ֆրանսիական վարժարանների կրթական ծրագրերին. «Գաղղիոյ վարժարաններու մէջ իմաստասիրութեան պարապելու աշակերտներուն առաջին անգամ այս գիրքը ձեռքներնին կ'ուտան, իբրեւ մի միայն ճշմարիտ ճառ փիլիսոփայութեան կը պատուիրեն գոց սերտել» (էջ 4–5)²⁶:

Ամենայն հավանականությամբ որոշ առարկաներ եւ մեթոդներ նրանք քաղել են հոգեւոր ուղղվածություն ունեցող օտար հաստատություններից: «Յոյս» հանդեսում ստեպ-ստեպ հայտնվող՝ ուսումնական տարին կամ քննաշրջանն ամփոփող տեղեկագրերից հայտնի է դառնում, որ 1875 թ. «Ղեւոնդյան» ժառանգավորաց վարժարանում դասավանդում են շուրջ քսան՝ այդ ժամանակների համար բավական նոր եւ առաջադեմ առարկա²⁷:

²⁶ ՊՕՍԻԻԷ, Յաղագս Ծանօթութեան Աստուծոյ եւ անձին, թարգմ.՝ Ա.ՌԱՔԵԼ Մ. ՇԱՐԱՊԽԱՆՅԱՆ, Յարմաշ, 1876, էջ 4–5: Հօգուտ ֆրանսիական ուսումնական ծրագրին հետեւելու է խոսում նաեւ այն փաստը, որ Ղեւոնդյանց վարժարանում ուսանողները նույնպէս անգիր գրաբար բնագրեր եւ թարգմանություններ էին սովորում (տե՛ս «Յոյս» 1875, հմր. 7, էջ 386):

²⁷ «Ուսումն հաւատոյ, Ուսումն Հայկական լեզուի, Գաղղիերէն, Տաճկերէն, Պատմութիւն սրբազան, ազգային եւ ընդհանուր, Պտմկ. [Պատմական] հմտութիւն Եւրոպայի քաղաքականութեան, Քաղաքական տնտեսութիւն [գուցե ազդվելով ժան Ժակ Ռուսսոյի "Economie politique" աշխատությունից], Երկրագործութիւն, Աշխարհագրութիւն, Թվաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Տոմարակալութիւն, Գծագրութիւն, Նկարչութիւն, Բնագիտութիւն, Փիլիսոփայութիւն (Հոգեբանութիւն, Տրամաբանութիւն, Բարոյագիտութիւն, Աստուածաբանութիւն, Պատմութիւն), Եկեղեցական երաժշտութիւն», տե՛ս «Յոյս», 1875, հմր. 7, էջ 433–434:

Հետեւաբար փաստ է, որ հոգեւոր այս կրթօջախն արդեն նկատելիորեն անջատված է միջնադարյան կրթական ավանդույթներից եւ գործունեությունը շարունակում է լուսավորական գաղափարների հետեւողությամբ²⁸: Այս գաղափարների արձագանքը շարունակվել է հետագայում տարբեր երկրներում բացված հայկական հոգեւոր ուսումնարաններում եւ գիտական ու հրապարակախոսական աշխատություններում:

Բ. ԻՐԱՎՈՒՆՔ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պատրիարքության լիազորությունների մեջ աշխարհականների ներգրավումով, իսկ ավելի ուշ «Թանգիմաթ»-ի հաստատումով եւ ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ արեւմտահայության մեջ սկզբնավորվում է Ազգային Սահմանադրություն ստեղծելու գաղափարը, որով կարգավորվելու էին Օսմանյան տերության մեջ ապրող հայերի իրավունքները:

Օսմանյան կայսրության միապետական եւ ռազմական երկիր լինելու, միակենտրոն իշխանական առանցք ունենալու, առաջին պատրիարքի՝ սուլթանի կողմից ընտրվելու եւ հաստատվելու հանգամանքները ենթադրել են տալիս, որ հայոց պատրիարքությունն ինքնին պետք է գործեր միապետական իշխանության սկզբունքներով: Սակայն ըստ Ա. Ալպոյաճյանի՝ սա հակասում էր Հայոց Եկեղեցու ժողովրդական բնույթին²⁹ (թերեւս ավելի ճիշտ կլիներ ասել՝ ժողովական բնույթին եւ ընդհանրապես Եկեղեցու ժողովական բնույթին): Հետեւաբար ներքուստ լռեցված եւ Եկեղեցու բնույթին չհամապատասխանող սկզբունքների պատճառով շուտով պատրիարքական լիազորությունների մեջ ի հայտ են գալիս աշխարհականների ներգրավման առաջին նշույլները³⁰: Այսպես օրինակ՝ հայտնի է, որ արդեն 1600-ականներին աշխարհականների ներգրավումը Եկեղեցու կյանքում այնքան էր ընդլայնվում, որ վերջիններս ստանձնում են պատրիարքական տեղապահի պաշտոնը եւ շուտով նաեւ քվեար-

²⁸ Այս վանքի համար առանցքային մեկ այլ ժամանակաշրջան է սկսվում 1889 թ., երբ այստեղ դասավանդում են Մ. Եպս. Օրմանյանը եւ Ե. Վրդ. Դուրյանը: Նրանցով սկիզբ է դրվում Արմաշի Դպրեվանքի մի նոր հետլուսավորական շրջանի, երբ վարժարանում գործող եւ ուսանող անձինք զբաղվում են պատմաքննադատական ուսումնասիրություններով, սակայն այս ամենն այլ հետազոտության նյութ է:

²⁹ Տե՛ս Ա. Ալպոյաճյան, նշ. աշխ., էջ 125–126:

³⁰ Տե՛ս անդ, էջ 126:

կուլթյան իրավունքով մասնակցում պատրիարքական ընտրություններին³¹։ ԺԹ. դարում այս մասնակցությունը կանոնավոր տեսք է ստանում, եւ Հովհաննես Կոլոտ պատրիարքի 1725 թ. գումարած ժողովը կրում է «Ազգային ընդհանուր ժողով» անվանումը։ Դրան մասնակցում են թե՛ աշխարհականներ եւ թե՛ հոգեւորականներ³²։ Ժամանակի մեջ աշխարհականները նաեւ իրավական այլ արտոնություններով են օժտվում՝ հաճախ սահմանափակելով կամ կիսելով պատրիարքական լիազորությունները։

Ի հավելումն այս իրադրության՝ 1839 թվականից եւրոպական ազդեցիկ երկրների ճնշման տակ եւ ներքին բարեկարգություն ապահովելու նպատակով Օսմանյան պետության մեջ ստեղծվում է օրենքների մի ամբողջություն, որ կոչվում է «Թանգիմաթ»։ Այդ օրենքներով մինչ այդ առանց որեւէ իրավունքի ապրող ազգային փոքրամասնություններին հավասար իրավունքներ են տրվում։ Սա նույնպես ազդում է պատրիարքական իրավասությունների սահմանափակման վրա։ Պատրիարքական վարչական մարմնի մաս կազմող ամիրաններից բաղկացած ժողովում «Թանգիմաթ»-ի ազդեցությամբ պարտադիր է դառնում ժողովրդի մասնակցության հանգամանքը, մի բան, որը մինչ այդ գոյություն չուներ։ Ժամանակի ընթացքում ազդեցիկ ամիրանների դերը նույնպես որոշիչ է դառնում, քանի որ բացի պատրիարքության հետ լիազորություններ կիսելուց՝ նրանք սերտ կապեր ունեին օսմանյան կարեւոր պաշտոնյաների հետ, ինչի հետ պատրիարքությունը դարձյալ պետք է հաշվի նստեր³³։ Նրանք էին նաեւ հովանավորում Եւրոպայի լուսավորության կենտրոն՝ Ֆրանսիա, ուսանելու ուղարկված հայ երիտասարդներին։ Իրենց հերթին այս երիտասարդներն էլ հետագայում իրենց վրա են վերցնում Ազգային Սահմանադրություն ստեղծելու պատասխանատվությունը։

Նրանցից ոչ քիչ թվով ուսանողներ եւ մտավորականներ 1848 թ.՝ «Ազգերի հեղափոխության» սկզբնավորման շրջանում, գտնվում էին Փարիզում՝ այս պատմական իրադարձության կենտրոնում։ Ֆրանսիական հեղափոխությունից են ներշնչվում նաեւ ուսյալ հայ մտավորականները եւ հետագայում փորձում նույնն իրականացնել արեւմտահայության մեջ³⁴։

³¹ Տէս անդ, էջ 129։

³² Տէս անդ, էջ 135։

³³ Տէս Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ, Ազգ. Սահմանադրութեան Առաջին Հիմնադիրը. Յակոբ Կրճիկեան, Տաճար, Թիւ 12, 1910, Տպ. Արզումեան, էջ 359–362։

³⁴ «Եւ մենք կրնանք պարծիլ թէ Արեւելքի մէջ առաջին ազգն ենք, որ եթէ ոչ լիակատար գիտակցութեամբ, գէթ հետեւողականութեամբ մը ընդգրկած ենք սահմանադրական

Այդ մտավորականներից մասնավորապես հիշատակելի են Հակոբ Կրճիկյանը (†1865), որն Արեւմտաւսթուրեմ կրթվելով եւ աշակցելով նաեւ իր ազգակիցներից շատերի կրթութեան գործին՝ օսմանյան պալատում բարձր պաշտոն էր զբաղեցնում: Նա է, որ պատրիարքական իշխանութեանը հակադրում է Վարչական ժողովները՝ որպէս համազոր ուժ³⁵: Սերովբե Վիշինյանն իր հերթին ամիրանների ընտրութեանը կազմակերպում է ժողովրդական քվերակութեան միջոցով: Հետագայում նրանց դրած հիմքերի վրա Նիկողոս Պալյանը (ճարտարապետ), Նահապետ Ռուսինյանը (բժիշկ), Գրիգոր Օտյանը (իրավաբան) ամբողջացնում են աշխատանքները եւ գլխավորելով պատասխանատու հանձնաժողովը՝ կազմում են Ազգային Սահմանադրութեանը³⁶:

Սահմանադրութեան վրա աշխատող իրավական խումբը բաղկացած էր թե՛ հոգեւորականներից եւ թե՛ աշխարհականներից: Ազգային Սահմանադրութեանը, թեեւ ոգեշնչված ֆրանսիական Սահմանադրութեանից, բխում էր Օսմանյան կայսրութեան՝ ժամանակի ընթացքում պատրիարքութեանը տված զանազան «ֆերմաններ»-ից եւ պատրիարքութեան՝ ժողովրդի նկատմամբ ստանձնած բանավոր օրենքներից: Այն հայութեան մեջ ընդունելութեան է արժանացել 1860-ին, սակայն կայսրութեան կողմից խմբագրումից հետո հաստատվել է միայն 1863 թ.: Ինչ-ինչ ընդհատումներով, սահմանափակումներով եւ կասեցումներով Սահմանադրութեանը գրեթե կես դար գործածվել է արեւմտահայութեան շրջանում, ձեւավորել է որոշակի աշխարհայացք եւ մտածողութեան, որը ժամանակի հետ անքակտելի մաս է դառնում արեւմտահայ մտավորականութեան գործունեութեան: Հետագայում աշխարհաքաղաքական եւ իրավական խնդիրների մեջ թե՛ հոգեւոր եւ թե՛ աշխարհիկ հայութեան գործունեությունները պայմանավորված է նաեւ այս կարճ, սակայն զգալի ազդեցություն ունեցող փորձով:

Գ. ՀԱՍԱՐԱԿԱՅ ԼԵԶՈՒՄ

ԺԹ. դարում արեւմտահայութեան մեջ լուսավորականութեամբ պայմանավորված շրջադարձային իրողութեաններից մեկը գրավոր լեզվի

կարգերը, եւ զանոնք գործադրած». անդ, էջ 359:

³⁵ Անդ:

³⁶ «Մեր Սահմանադրութիւնը ժողովուրդին հեղինակութիւնը չէ: Մեր Սահմանադրութիւնն անհատական նախաձեռնութեան արդիւնքն է...». անդ, էջ 359:

բարեկարգումն է: Նախաձեռնողները փորձում են իրենց ժամանակի տարածված եւ կիրառվող բարբառներից մեկը՝ մասնավորապես Կ. Պոլսի հայկական բարբառը, քերականական մշակման եւ կանոնավորման ենթարկելով, գրական լեզվի վերածել: Սա դիտվում էր որպես լեզուն եւ գրականությունը մատչելի եւ հասանելի դարձնելուն ուղղված միջոց, որը նպաստելու էր առաջադիմության տարածմանը: Թեեւ գրականությունն արեւմտահայություն մեջ վաղուց արդեն (հայտնի օրինակ է Հակոբ պատրիարք Նալբանը) ստեղծվում էր աշխարհաբարով եւ նույնիսկ թուրքերենով (որպես առավել տարածված լեզու)³⁷, սակայն դպրոցներում եւ վարժարաններում գլխավորապես ուսուցումը կազմակերպվում էր միայն գրաբարով: Այս ժամանակաշրջանի գրեթե յուրաքանչյուր հեղինակ լեզվական կանոններին հետևում էր ուրույն ձևով, ինչը, ինչպես հաճախ կարելի է հանդիպել ժամանակի մամուլում, բացի անորոշությունից՝ հանգեցնում էր նաեւ բանավեճերի: Ավելի մեծ համայնապատկերի մեջ հին (դասական համարվող) լեզվի բարեկարգման շարժումը ծավալվում էր ֆրանսերենի, թուրքերենի եւ այլ լեզուների բարեփոխությունների հետևողությամբ³⁸:

Անուղղակիորեն նպաստելով լեզվական բարեկարգման այս շարժմանը (1853 թ.)՝ պատրիարքությունը եւ Գերագույն ժողովը (հին, պահպանողական սերունդ) ուսյալ երիտասարդներից բաղկացած Ուսումնական խորհուրդ կոչվող մարմին են ստեղծում, որը պետք է խթաներ արեւմտահայերի կրթական, դաստիարակչական եւ առհասարակ մտավոր ձեռնարկների ստեղծումը³⁹:

Լեզվի բարեկարգման հարցն առարկայական հողի վրա դնելով՝ Ուսումնական խորհրդի անդամ Գ. Օտյանը 1851 թ. գրում է «Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրայ» գրքույկը, որտեղ հանգամանալից քննության էին առնվում խնդրի վերաբերյալ երկու միմյանց գաղափարապես ներհակ ճամբարների փաստարկները, եւ ներկայացվում էին երկու կողմերի տեսակետների դրական եւ բացասական կողմե-

³⁷ Կարելոր է նշել, որ Մխիթարյան հայրերը դասագրքերը, իսկ ամերիկացի միսիոներները ողջ Աստվածաշունչը հրատարակում էին ժամանակի խոսակցական լեզվով, տե՛ս K. A. SARAFIAN, History of Education in Armenia, էջ 204:

³⁸ Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ, Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին, Կոստանդնուպոլիս, 1853, էջ 2–3:

³⁹ Ա. ԱՂՈՅԱՃԵԱՆ, Հայ եկեղեցի. կրթական Յիսնամեակ մը (1853–1903), Բիւզանդիոն, թիւ 2162, 1903, էջ 1:

րը⁴⁰: Հստ ալսմ՝ լուսավորամետ շրջանակները պնդում են, թե գրաբարը դժվարուսանելի եւ խորթ է արեւմտահայությանը, հետեւաբար ավելորդ է, եւ հաճախ անհնարին ջանք է պահանջվում այն յուրացնելու համար: Իսկ հակառակ ճամբարի պնդմամբ աշխարհաբարը, օտարամուտ բազում բառեր եւ քերականական ձեւեր ունենալով եւ անկանոն լինելով, պատշաճ չէ գրական լեզու դառնալու համար: Իր հերթին՝ Գ. Օտյանի ծրագիրը աշխարհաբարը կանոնավորել եւ գրաբարին մոտեցնելն է եղել, այնքան մոտեցնելը, որ ժամանակի ընթացքում աշխարհաբարն զգալիորեն նույնանա գրաբարի հետ⁴¹ (դժվար ընկալելի մի բան): Այդուհանդերձ՝ այս գրքուկի բուն նպատակն աշխարհաբարը որպես հասարակաց, այսինքն՝ հանրային կամ ժողովրդական գրավոր լեզու կիրառելի դարձնելու առաջարկությունն անելն է: Դատելով այս գրվածքից՝ հակառակ ճամբարի ծայրահեղ մոտեցմամբ առաջարկվում էր բոլոր հրատարակությունները գրաբարով իրականացնել, եւ գրաբարը, այսինքն՝ հիմնական կիրառությունից դուրս լեզուն դարձնել հասարակաց լեզու: Պահպանողական այս մոտեցումներն իհարկե ծայրահեղ էին, քանի որ բացի եկեղեցական եւ հատուկենտ ուսյալ աշխարհականներից՝ գրաբարի կիրառությունն անգործածելի էր արեւմտահայության մեծ մասի համար: Այդ առիթով նույն գրքուկում Գ. Օտյանը գրում է. «...այնպիսի հայաբնակ տեղեր ունինք, Կիլիկիա ու Կապադովկիա նահանգներուն մէջ, Քիւթահեա, Անդրիանուպօլիս, Պրուսա եւ ուրիշ շատ քաղաքներ՝ ուր եւ ոչ իսկ աշխարհաբար խոսիլ գիտեն, թող գրաբարը...»⁴²:

Լուսավորական Ն. Ռուսինյանը, աշխարհաբարի կիրառության առաջամարտիկներից մեկը լինելով, արդեն Փարիզում ապրած տարիներին ստեղծում է «Ուղղախօսութիւն»⁴³ անվանումով ձեռնարկը՝ փորձելով հստակություն եւ միօրինակություն մտցնել արեւմտահայ գրական լեզվի մեջ: Տարիներ հետո այս դասագիրքը Ուսումնական խորհրդի միջոցով դժվարությամբ հրատարակվում է, բայց նույնիսկ հրատարակվելուց հետո գործածության երկար կյանք չի ունենում: Դասագրքի ստեղծման նպա-

⁴⁰ Տե՛ս Գ. ՕՏԵԱՆ, Առաջարկելիւն Աշխարհաբար Լեզուի Վրայ, Կոստանդնուպօլիս, 1851, էջ 7–9:

⁴¹ Տե՛ս անդ, էջ 11:

⁴² Տե՛ս անդ, էջ 3:

⁴³ Տե՛ս Ն. ՌՈՒՍԻՆՅԱՆ, Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին:

տակը Պոլսի հայերեն բարբառին, որ ժամանակի ամենից գործածելին եւ հասանելին էր, գրական-կանոնական կարգավորություն տալն էր⁴⁴:

Այս դեպքերից մոտավորապես 50 տարի հետո (1897 թ.) Զ. Տոնելյանը (մանկավարժ եւ գրող, հայտնի է նաեւ Սիպիլ անունով) Հրանտ Ասատուրի հետ կազմած մի լեզվական ձեռնարկի մեջ գրում է. «Փորձառութիւնը զգացուց թէ ժամավաճառութիւն էր գրաբարի աշխատցնել այդ հասակի տղաքը, իրենց խօսած լեզուն սորվեցնելէ առաջ, եւ Ուսումնական Խորհուրդը իր ծրագրին մէջ ընդունեցաւ աշխարհաբար քերականութիւնը նախակրթարաններու մէջ աւանդելու դրութիւնը»⁴⁵:

Ըստ էության՝ առաջին անհաջող փորձերից հետո պատմական բարդ հանգամանքների մեջ լուսավորականների՝ աշխարհաբարը հասարակաց լեզու դարձնելու ծրագիրն այնուամենայնիվ նկատելիորեն իրագործվում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բուն լուսավորության տարածումն արեւմտահայոց մեջ ժԹ. դարից սկսած՝ բազմաբեւեռ ընթացք է ստանում եւ զգալի փոփոխությունների բերում: Միջնադարյան կրթությունը, իրավական ընկալումները եւ լեզվական գործադրությունը աննախադեպ փոխակերպումների են ենթարկվում: Տեղի ունեցած փոփոխությունները որոշիչ ազդեցություն են ունենում հետագա տասնամյակների ոչ միայն եկեղեցականության, այլեւ ընդհանրապես հայ ժողովրդի կենսակերպի վրա: Սա մի կողմից աշխարհիկացման, մյուս կողմից ժամանակի պահանջներին համընթաց քայլելու փորձ էր:

Միջնադարից ժառանգված այլ գիտությունների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքն արեւմտահայությանը հանգեցնում է նոր իրողությունների արագ յուրացմանը, որոնք գրեթե ամբողջապես փո-

⁴⁴ Նման փորձերից առաջինը թերեւս կարող է համարվել Մխիթար Աբբայի 1726 թ. ստեղծած քերականական ձեռնարկը, հետո 1847 թ. էլիաս Ռիգս անունով միսիոներ ճեղհնակած հայերեն քերականության մասին գործը, որին հաջորդում է Ն. Ռուսինյանի արդեն հիշատակված ձեռնարկը: 1866 թ. Ա. Այսնյանն ստեղծում է «Քննական Քերականութիւն» աշխատությունը, որն այս ոլորտում իրականացված ամենամեծ եւ հիմնարար գործն է, սակայն սա դասագիրք չէ: Արդեն 1880-ից սկսած՝ նման դասագրքերը բավականին տարածված էին հայկական ուսումնարաններում: Այս ամենի մասին տես Զ. ՏՕՆԷԼԵԱՆ, Գործնական Քերականութիւն Արդի Աշխարհաբարի, Ա. Գիրք, Կ. Պոլիս, 1897, էջ 5–7:

⁴⁵ Անդ, էջ 5:

խարինելով միջնադարից շարունակվող ավանդույթներին՝ ընդհատում են դրանց ընթացքը:

Հայացք նետելով արեւմտահայույթյան հետագա տարիների իրականությունը՝ կարելի է տեսնել, որ թեեւ տեղահանված, աքսորված եւ սարսափների ճանապարհ անցած ժողովրդի մեջ այս մտայնությունները եւ ձեռքբերումները ոչ միայն չեն անհետանում, այլեւ նոր ճյուղավորումներով տարածվում եւ զարգանում են Օսմանյան կայսրությունից դուրս նոր հայկական համայնքներում:

ՀԻՄՆԱԲԱՆԵՐ

Միջնադար, Լուսավորություն, կրթություն, իրավունք, լեզու, Արմաշ, Ազգային Սահմանադրություն, հասարակաց լեզու

РЕЗЮМЕ

Среди армянской общины Османской империи, начиная с 18 века, европейское просвещение распространялось по многим векторам, что привело к значительным изменениям образования, литературного языка и юридического статуса. Осуществленные изменения, в течении последующих десятилетий, оказывали существенное влияние на общее мировоззрение армянского народа. В какой-то мере это был не только процесс секуляризации и попыток приноравливания к условиям данного времени, но также культурного пробуждения и подъема.

Унаследованное от средневековой традиции положительное отношение к новым научным реалиям привела к быстрому усвоению западными армянами новых европейских дисциплин.

Сравнительный анализ последующих лет показывает, что, несмотря на пройденный тяжелый путь армянского народа, эти явления продолжают развиваться в армянских общинах и за пределами бывшей Османской империи.

SUMMARY

Among the Armenian community of the Ottoman Empire, the European Enlightenment spread by many vectors and led to significant changes from the 18th century onwards. Under these influences, medieval modes of education, legal status, and literary language underwent an unprecedented transformation. These changes had a decisive influence not only on the Church in the following decades, but also on the general outlook of the Armenian people. It was in some measure a process of secularization, but also of revival and attempt to adapt to the conditions of the time.

The broad and syncretic attitude inherited from the medieval tradition led to the rapid assimilation of new phenomena by Western Armenians.

Looking at subsequent years, despite the exile and the terrible path Armenians have passed, this distinctive legacy has not disappeared, but rather branched out, being expressed, realized, and developed in new Armenian communities outside the former Ottoman Empire.

